

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐ

Մ. Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը իր ամբողջ գործունեությունը, պրոպագանդայի բոլոր միջոցներն ու ձեռքը նպատակամղել էր սովետական ժողովրդին մոքիլիզացնելու, ահեղ ու նենգ թշնամուն դիմադրավելու, հայրենիքը փրկելու, ազնիվ ու նվիրական գործին՝ Մեր կուսակցության ձեռքին այդ հզոր միջոցներից մեկն էլ մամուլն էր։

Դեռևս կուսակցության ստեղծման արշալույսին Վ. Ի. Լենինը մամուլի մասին ասել է, որ այն ոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ է ու ագիտատոր, այլ նաև կոլեկտիվ կազմակերպիչ։

Պատերազմի պայմաններում է՛լ ավելի մեծացավ մամուլի դերը, որի առև՝ բարդ ու պատասխանատու նոր խնդիրներ դրվեցին։

Կատարելով կուսակցության Կենտկոմի ցուցումը, բանակի Գլխավոր քաղվարչությունը պատերազմի երկրորդ օրն արդեն գործող բանակների և դիվիզիաների թերթերին հատուկ հրահանգ ուղարկեց, որտեղ նշվում էր. թե ռեալմաճակատային, բանակային և դիվիզիոն բազմատիրաթների պետք է բացատրական աշխատանք տանեն Հայրենական մեծ պատերազմի ընդթիվ և նպատակների մասին, սովետական մարտիկներին դաստիարակեն հայրենասիրության, նվիրվածության և դեպի թշնամին այրող ատելության ողովն¹։

Թերթերը կոչված էին ամենաարագ ձևով լուսաբանելու մարտական իրադարձությունները, լայնորեն ցույց տալու առանձին մարտիկների, ստորաբաժանումների և զորամասերի գործողությունները, Մարտերում առանձնապես աչքի ընկած զինվորների սխրագործությունները մասսայականացնելու և նրանց ցրինակով ռազմիկներին դաստիարակելու նպատակով բանակի Գլխավոր քաղվարչության ցուցումով ռազմաճակատային, բանակային և դիվիզիոն թերթերում ստեղծվեց «Հայրենական պատերազմի հերոսները» մշտական խորագիրը։

Պատերազմը նոր խնդիրներ էր դնում զինվորական թերթերի առջև։ Դեռևս մարտական պայմաններում աշխատանքի փորձ չունեցող լրագրողները օգնության մեծ կարիք ունեին, և Գլխավոր քաղվարչությունն իր ուշադրության կենտրոնում էր պահում մամուլի գործունեությունը, Վերջինիս հրահանգներից մեկում դրված է. «Թերթերը համարից-համար պիտի տպագրեն նյութեր՝ հետևյալ թեմաներով. լինել զգոն և պահպանել ռազմական դադտիքը, փոխօգնություն մարտում, պահպանել քաղաշխատողին և հրամանատարին, դենքն ու նյութական մասը, վիրավորներին շթողնել մարտի դաշտում։ Սովետական բանակի զինվորը դերի չի ընկնում»²։

¹ ՍՍՀՄ պաշտպանության մինիստրության արիւլ, ց. 11314, գ. 5, թ. 126։

² Նույն տեղում, գ. 8, թ. 459։

Այս շափազանց կարևոր հրահանգը թերթերը կատարում էին անվերապահորեն: Մարտական կյանքը նոր հարցեր էր առաջադրում և դրանց համապատասխան ավելանում և հարստացվում էին թերթերի խորագրերը:

Ղրիմի տեղիտորիայում մարտական գործողություններ ծավալելու առաջին իսկ օրերին Անդրկովկասյան զինվորական օկրուգի քաղաքական վարչությունը թույլատրվեց հիմնել «Բոյնվոյ նատիսկ» ամենօրյա զինվորական թերթը: Հետագայում այն դարձավ Ղրիմի ռազմաճակատի օրգանը՝ «Բոյնվայա Կրիմսկայա» խորագրով, իսկ ավելի ուշ՝ Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի թերթը, որը կոչվում էր «Վպերյոդ կը պոբեդե»:

Սովետա-գերմանական ռազմաճակատի ընդլայնման և ծավալման հետ մեկտեղ ավելանում էին նաև զինվորական թերթերը: Դրանցից ամենամասսայականը դիվիզիաների թերթերն էին, որոնց առաջնահերթ նպատակն էր կյանքից և մարտական գործողություններից վերցված օրինակներով մարտիկների մեջ դաստիարակել բարոյական-մարտական բարձր հատկություններ, տարածել խիզախների փորձը:

Ինչ առավելություն ունեին այդ թերթերը: Ամենից առաջ այն, որ դրանք լույս էին տեսնում մարտական գործողությունների առաջին գծում և մեծ հնարավորություն ունեին օպերատիվ ձևով լուսաբանելու իրադարձությունները: Դիվիզիոն բազմատիրափներն ընդգրկում էին ռազմաճակատի համեմատաբար փոքր հատվածը, այդ պատճառով էլ կարողանում էին առավել մատչելի ձևով, դիվիզիայի գործողությունների սահմաններում, մոտիկից պարզաբանելու առաջնահերթ խնդիրները, արագորեն արձագանքելու ռազմաճակատում տեղի ունեցող փոփոխություններին:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին սովետական զինվորական մամուլը համալրվեց և հարստացավ ազգային լեզուներով լույս տեսնող ռազմաճակատային, բանակային և դիվիզիոն թերթերով: Այդ տարիներին միայն հայերեն լույս տեսավ 16 անուն թերթ, որից յոթը՝ ռազմաճակատային: Դեռևս 1942 թ. փետրվարին Կովկասյան ռազմաճակատի Սևծովյան խմբի զորքերի «Բոյնվոյ նատիսկ» ռուսական թերթը սկսեց լույս տեսնել նաև հայերեն («Մարտական գրոհ»), վրացերեն և ադրբեջաներեն³: Իսկ նույն թվականի մայիսին Գլխավոր քաղվարչությունը որոշում ընդունեց ազգային լեզուներով ռազմաճակատային թերթեր լույս ընծայելու մասին:

1942 թ. մայիսից մինչև դեկտեմբերի վերջն ընկած ժամանակամիջոցում Հարավային, Բրյանսկի, Անդրկովկասյան, Հյուսիսային Կովկասի ռազմաճակատներում ստեղծվեցին հայկական թերթեր: Իսկ հաջորդ տարվա հուլիսին և հոկտեմբերին ռազմաճակատային հայերեն թերթեր լույս տեսան նաև Նրկորդ ուկրաինական ու Նրորդ մերձբալթյան ռազմաճակատներում: Ազգային լեզուներով լույս տեսնող բազմատիրափների և ռուսական թերթերի անվանումները նույնն էին: Սակայն դրանք ռուսական թերթերի պատճենները չէին: Խմբագրություններն ունեին ստեղծագործական կոլեկտիվ և իրենց թղթակիցները, որոնք նյութեր էին ուղարկում ռազմաճակատի տարբեր հատվածներից և ազգային ստորաբաժանումներից: Այդ թերթերի տպաքանակը տատանվում էր 2—5 հազարի սահմաններում:

Ազգային լեզուներով լույս տեսնող թերթերը մարտիկներին դաստիարակում էին ինտերնացիոնալիզմի, հայրենիքին ազնվորեն ծառայելու, թշնամու

³ Նույն տեղում, ց. 1199, գ. 42, թ. 37:

նկատմամբ ատելություն բորբոքելու ոգով: Թերթերը մարտիկներին ուսուցանում էին զինվորական կարգովանոն, կապ էին պահպանում հանրապետությունների հետ. տպագրում մարտիկների ձևայիններ. ինչպես նաև թիկունքի տաքցված նամակներ և այլ նյութեր:

Տասնամյակներ են անցել պատերազմական ծանր օրերից: Մարտական իրադարձությունների հետ կապված շատ դեպքեր մոռացվել են: Սակայն զինվորական մամուլը իր էջերում խնամքով պահպանում է դառնություններով, փորձություններով, հերոսապատումներով և հաղթանակի բերկրանքով լի 40-ական թվականների առաջին կեսի իրադարձությունները: Այդ տեսակետից զինվորական մամուլը յուրատեսակ հանրագիտարան է, պատմագիտական հարուստ աղբյուր:

Մարտական թերթերը հսկայական տեղ են հատկացրել կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության կարևորագույն որոշումներին, տպագրել զիվանագիտական նոտաներ, ռազմաճակատների հրամանատարության փաստաթղթեր, սովետական ինֆորմբյուրոյի հաղորդագրություններ, գերմանաֆաշիստական զավթիչներից խլված և նրանց մտադրությունները բացահայտող փաստաթղթեր, սովետական թիկունքի հերոսական աշխատանքը բնութագրող նյութեր, հանրապետությունների կոմկուսների Կենտկոմների պաշտոնական գրություններ ու կոչեր, նամակներ ու դիմումներ՝ ուղղված զորամասերին, ինչպես նաև դրանց պատասխանները՝ թիկունքի աշխատավորներին:

Զինվորական թերթերի էջերից շեր իջնում գեղարվեստական խոսքը: Տպագրելով բանաստեղծություններ, արձակ գործեր, երգիծական և հրապարակախոսական նյութեր, թերթերը դրանով իսկ նպաստում էին մեր արդար գործի հաղթանակին, մարտիկների մեջ դաստիարակում անսահման սեր դեպի սոցիալիստական հայրենիքը:

Որպես պատմագիտական աղբյուր, մենք վերցրել ենք հայկական զինվորական թերթերը Կովկասի պաշտպանության ժամանակամիջոցում և Ղրիմի համար մղված մարտերում: Այդ ժամանակահատվածը լի է կովկասյան ժողովուրդների հերոսամարտերով: Այդ մեծ ճակատամարտերին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև հայ ժողովուրդը և հայկական զինվորական մամուլը:

Հայտնի է, որ թշնամին մեծ հույսեր էր կապում իր տանկային միավորումների հետ: Այդ հզոր տեխնիկական կազմում էր հիտլերյան Գերմանիայի ռազմական մեքենայի ողնաշարը: Սակայն միայն սովետական բանակը կարողացավ գտնել թշնամու «վագրերի» դեմ պայքարի ամենաուսուցիչ միջոցը: Այդ իմաստով ուշագրավ օրինակ է տվել 390-րդ հայկական հրաձգային դիվիզիան Ղրիմում: Նրա օրգան «Հայկական սնայսեր» մի ամբողջ էջ է նվիրել գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի ջախջախման տատմությանը: ...Մարտի 20-ի լուսաբացին և ամբողջ օրվա ընթացքում 100-ից ավելի տանկերը, զրահամեքենաները և գերմանական դիվիզիաների հետևակային զորքերը երեք անգամ գրոհի անցան մեր զորքերի դեմ, բայց ոչ մի հանկարծակիություն տեղի չունեցավ, քանի որ մեր հրամանատարությունը զիտեր գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի գալու մասին և կազմակերպել էր նրան արժանի հանդիպում: Մարտի 20-ին գերմանացիները կորցրել են 47 տանկ»⁴:

⁴ «Հայկական սնայսեր», 26. III. 1942:

«Հայկական սնայպերը» տպագրել է Պաշտպանության ժողովրդական կոմիսարի տեղակալ, առաջին կարգի բանակային կոմիսար Լ. Մեխլիսի հեռագիրը՝ ուղղված ՀԿԿ Կենտկոմին, ուր ցավակցություն է հայտնվում զնապետ Մ. Հաբլյանի զոհվելու առթիվ, միաժամանակ բարձր գնահատական է տրվում հայ մարտիկներին՝ գերմանական 22-րդ տանկային դիվիզիայի կատաղի գրոհին հերոսաբար դիմադրելու համար: «Բանակի մյուս զորամասերի հետ միասին, հայ մարտիկներն այնպես ջախջախեցին հակառակորդին, որ նա կռվի դաշտում թողեց 47 տանկ»⁵:

1942 թ. ամռանը, գերմանական բանակի հրամանատարությունը մարտի մեջ գցելով մեծ քանակությամբ պահեստային զորամասեր, ձեռք բերելով կենդանի ուժի և տեխնիկայի առավելություն, հարձակման անցավ սովետա-գերմանական ռազմաճակատի հարավ-արևմտյան ուղղությամբ և դուրս եկավ Վորոնեժի և Ստալինգրադի մատուցյաները: Թշնամին միաժամանակ հարված հասցրեց հարավում և գրավեց Նովոռոսիյսկը, Պյատիգորսկը, Մոզդուկը: Գերմանացիների նպատակն էր Անդրկովկասի գրավումը: Անդրկովկասի ժողովուրդների համար օրհասական այդ օրերին, 1942 թ. օգոստոսի 23-ին, Թբիլիսիում տեղի ունեցավ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգ, որի արձագանքները տարածվեցին ամբողջ երկրում, ռազմաճակատի բոլոր հատվածներում: Միտինգն արտացոլեց այն զգացմունքներն ու խոհերը, որոնցով ապրում էին Անդրկովկասի ազատասեր ժողովուրդները ֆաշիստական վտանգի ծանր օրերին: Այդ օրերին Կովկասը պաշտպանող զինվորական միավորումների բոլոր թերթերը տպագրեցին նյութեր Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգից: «Հիտլերյան ավազակները ներխուժեցին Հյուսիսային Կովկասի լայնարձակ տարածությունները: Նրանք նետվում են դեպի լեռները: Գերմանա-ֆաշիստական ավազակները արբել են Կուբանի ոսկեգույն ցորենի տեսքով, Գրոզնու նավթի հոսով... Հիտլերյան ֆաշիստները ուզում են Կովկասն անջատել ամբողջ սովետական երկրից... բայց դա ցնորք է»⁶:

Նույն թերթը տպագրել է նաև «Անդրկովկասի ժողովուրդների երդումը» վերնագրով հոդվածը, ուր ասված է. «Անդրկովկասի զավակներ՝ Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի ժողովուրդներ. Ձեզ է ուղղված ներկա ահավոր ժամին Թբիլիսիում հակաֆաշիստական միտինգի հավաքված ձեր ներկայացուցիչների կողմ: Թշնամին ցանկանում է կտրել մեր ռազմաճակատը, հյուսիսն անջատել հարավից, կտրել ամբողջ երկրի ու Կովկասի միջև եղած կապը: Նա ձգտում է խզել եղբայրական կապերը, որոնցով միաձուլված են Կովկասի ժողովուրդները սովետական ժողովուրդների ամբողջ ընտանիքի հետ»⁷:

Թերթը հայ ռազմիկներին մեկ անգամ ևս պատմում է մեր ժողովրդի բազմաշարժար անցյալի մասին, համոզիչ փաստերով ցույց տալիս, որ հազարամյակներ անցած հայ ժողովուրդը իսկական ազատություն է ձեռք բերել միմիայն սովետական կարգերի շնորհիվ: Ապա բերվում է ակադեմիկոս Հովսեփ Օրբելու՝ միտինգում արտասանած ճառից մի հատված:

Տպագրելով հայրենասիրական շնչով տոգորված այդ փաստաթղթերը, զինվորական թերթերը մարտիկների մեջ դաստիարակում էին բարոյա-քաղա-

⁵ «Հայկական սնայպեր», 22. IV. 1942:

⁶ «Կարմիր զինվոր», 5. IX. 1942:

⁷ «Կարմիր զինվոր», 15. IX. 1942:

բական բարձր հատկություններ, գաղափարական համոզվածություն, սեր և նվիրվածություն սոցիալիստական հայրենիքի նկատմամբ:

Հայկական զինվորական թերթերը մարտիկներին հիշեցնում էին կայզերական Գերմանիայի կատարած ոճրագործությունները դարի սկզբին: «1914—1918 թթ. պատերազմի հետևանքով հայ ժողովուրդը մեծ ողբերգություն ապրեց: Այդ պատերազմը, որի բորբոքման զլխավոր հանցագործը գերմանական իմպերիալիստներն էին, մեծագույն աղետ բերեց հայ ժողովրդին... Այսօր մեր առջև կանգնած է երեկվա մեր դահիճը՝ ավելի տմարդի, ավելի վայրագ, ավելի ցազազած»⁸:

Սովետական Հայաստանի 22-րդ տարեդարձի առթիվ «Կարմիր զինվորը» տպագրել է «Գերմանական զավթիչները հայ ժողովրդի դահիճն են» խորագիրը կրող նյութեր, որոնք կոնկրետ փաստերով ցույց են տալիս գերմանական պետության և նրա դաշնակից Թուրքիայի քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ: Թերթում տպագրված նյութերը հիշեցնում էին Հիտլերի անմիջական կամակատար Գյորինգի ծրագրային ցուցումները Կովկաս մեկնող գերմանական զորքերին այն մասին, թե պետք է «հաշվի առնել հայերի հատուկ անբարյացակամությունը դեպի մեզ (այսինքն՝ դեպի հիտլերականները)»⁹:

Զինվորական մամուլը հատուկ տեղ էր տալիս գերմանա-ֆաշիստական զավթիչների ու նրանց գործակիցների շարագործություններին և ՍՍՀՄ քաղաքացիներին, կոլտնտեսականներին, հասարակական կազմակերպություններին, պետական ձեռնարկություններին ու հիմնարկներին պատճառած վնասը պարզող ու հետաքննող պետական արտակարգ հանձնաժողովի հաղորդագրություններին, ինչպես նաև սովետական կառավարության հայտարարություններին, որոնք առնչվում էին մեր քաղաքացիների ոչնչացման և տեղահանման հարցերի հետ:

Հայրենական պատերազմի առաջին երկու տարում հիտլերականները մեծ թվով սովետական քաղաքացիների աքսորեցին Գերմանիա՝ տաժանակիր աշխատանքի: Այդ առթիվ սովետական կառավարությունը բազմիցս հանդես եկավ դիվանագիտական նոտաներով: Ահա այդ փաստաթղթերից մեկը, որ տպագրել են զինվորական թերթերը Կովկասի պաշտպանության ժամանակաշրջանում: Նոտան վերնագրված է՝ «Սովետական խաղաղ քաղաքացիների մասսայաբար և բռնի կերպով գերմանա-ֆաշիստական ստրկության ըջևում մասին և այդ հանցագործության համար Գերմանիայում սովետական քաղաքացիների հարկադիր աշխատանքը շահագործող գերմանական իշխանություններին և մասնավոր անձանց պատասխանատվության մասին»:

«Դեռևս 1941 թվականի նոյեմբերի 7-ին, — ասված է նոտայում, — Բեռլինում կայացած գաղտնի խորհրդակցությունում, ռախսամարշալ Գյորինգը իր շինովնիկներին հրահանգ է տվել՝ սովետական մարդկանց Գերմանիայում հարկադիր աշխատանքներում օգտագործելու մասին: «Ռուս բանվորները ցույց տվեցին աշխատելու իրենց ընդունակությունը: Այժմ պետք է նրանց օգտագործել Գերմանիայի համար: Սովետական քաղաքացիներին հարկավոր է փխավորապես օգտագործել ձանապարհաշինության, երկաթուղիների կա-

⁸ «Կարմիր զինվոր», 30. X. 1942:

⁹ «Կարմիր զինվոր», 29. XI. 1942:

ռուցման և բերքահավաքի աշխատանքներին, օդանավակայանների ականահանման և կառուցման համար»¹⁰,

1943 թ. հուլիսին Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զորամասերում տարածվեց գերմանա-ֆաշիստական զավթիչների՝ Կրասնոդար քաղաքում կատարված ահավոր շարագործությունների լուրը: Պետական արտակարգ հանձնաժողովը անհերքելի փաստերով մերկացրեց գերմանական 17-րդ բանակի ղեկավարների և նրանց ձեռքին գործիք դարձած հայրենիքի մի բուռ դավաճանների շարագործությունները: Միայն Կրասնոդարում դահիճները թունավոր դագերի օգնությամբ ոչնչացրել էին ավելի քան 6700 սովետական քաղաքացիների¹¹: Թերթի մեկ ուրիշ հաղորդագրություն մարտիկներին տեղեկացնում էր, որ տեղի է ունեցել Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի զինվորական տրիբունալի նիստ, որտեղ լսվել է գերմանական զավթիչների և նրանց գործակիցների Կրասնոդարում և մարզում կատարած ոճրագործների մասին գործը և որ դահիճներն արժանի պատիժ են ստացել:

Այդ բովանդակությամբ նյութերն ու փաստաթղթերը, որ տպագրվել են զինվորական մամուլում, չափազանց կարևոր են մեր ժողովրդի պատմության տվյալ ժամանակահատվածը ուսումնասիրելու համար:

Կովկասի հերոսական պաշտպանության ժամանակաշրջանում հսկայական դեր խաղացին թիկունքի աշխատավորները, Անդրկովկասյան հանրապետությունների կուսակցական օրդանները: Ռազմաճակատում կենաց ու մահու կոլի ելած հայկական զորամասերի մարտիկները գտնվում էին թիկունքի ամենօրյա ուշադրության կենտրոնում: Անդրկովկասի ժողովուրդների հետ թեթևի տված հայ ժողովուրդն իր անդադրում աշխատանքով ոգևորում էր մարտիկներին, անհրաժեշտ ամեն ինչ անում մեր հաղթանակի համար: Այդ բանի պերճախոս վկաներն են զինվորական մամուլում տպագրված նյութերը:

«Հայ մարտիկներին՝ հայ ժողովրդից» պատմական նամակի հրապարակման, մասսայականացման և պրոպագանդման ուղղությամբ մեծ աշխատանք կատարեց զինվորական մամուլը: Ամենուրեք ստորաբաժանումներում անցկացվում էին միտինգներ՝ նվիրված նամակին, ուր հայ մարտիկները երգում էին տալիս՝ սրբությամբ կատարել հարազատ ժողովրդի Պատգամը, կռվել մինչև արյան վերջին կաթիլը և վտարել թշնամուն հարազատ հողից: Հայ ժողովուրդը գրում էր իր զավակներին. «Կարմիր բանակի հզորությունն է՛լ ավելի բարձրացնելու համար մենք որոշեցինք սեփական միջոցների խնայողության հաշվին կառուցել «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյունը, մի քանի օրվա ընթացքում հավաքելով 46 միլիոն ռուբլի: Հայաստանի քաղաքների և շրջանների աշխատավորները 21 միլիոն ռուբլի հատկացրին «Սովետական Հայաստան» մարտական ինքնաթիռների կառուցման համար: «Հայաստանի կոմերիտական երկրորդ տանկային շարասյուն կառուցելու համար Հայաստանի երիտասարդությունը հավաքեց 3 միլիոն ռուբլի»¹²:

Տպագրելով այս նամակը, «Առաջ հանուն հայրենիքի» թերթը հետագայում բազմաթիվ նյութեր նվիրեց այդ թեմային: Մարտի 25-ին թերթն իր երրորդ էջը հատկացրել է զվարդիական զորամասում տեղի ունեցած միտինգին: «Նրանք խանդավառությամբ ընդունեցին հայ ժողովրդի խոսքն ու մարտական

¹⁰ «Առաջ, հանուն հայրենիքի», 16. V. 1943:

¹¹ «Կարմիր զինվոր», 15. VII. 1943:

¹² «Առաջ, հանուն հայրենիքի», 13. III. 1943:

նամակը՝ մեր հերոս նախնիների նման անձնավորությամբ պաշտպանել հայրենի հողը օտարերկրյա բռնակալներից: Այդ էջում տպագրված են մարտիկների ելույթները, ինչպես նաև զվարդիականների պատասխան նամակը՝ ուղղված հայ ժողովրդին:

Ռազմաճակատում մարտնչող իրենց հայրերին, եղբայրներին, որդիներին և ամուսիններին հսկայական օգնություն էին ցույց տալիս կոլտնտեսային գյուղի աշխատավորները: «Հանուն հայրենիքի», «Առաջ, հանուն հայրենիքի», «Մարտական գրոշ» թերթերը «Սովետական Հայաստան» մշտական խորագրի տակ հաղորդագրություններ էին տպագրում հայ ժողովրդի հերոսական գործերի, ռազմաճակատին ցույց տրվող օգնության մասին:

Ռազմաճակատին օգնում էին ոչ միայն կոլեկտիվ կազմակերպությունները, այլև սովետական առանձին քաղաքացիներ: Պաշտպանության ժողովրդական կոմիտեին հասցեագրած իր նամակում Հայկական ՍՍՀ Ղամարուի չըրանի Գետաշենի կոլտնտեսության նախագահ Արշակ Շահվերդյանը գրում էր. «Համակված ջերմ ցանկությամբ՝ ուժեղացնելու հարազատ կարմիր բանակի հզորությունը, ես իմ անձնական խնայողություններից պետքանկ մուծեցի 120 հազար ռուբլի «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյուն կառուցելու համար»¹³:

Ինչպես հայտնի է, 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան կազմավորվեց Երևանում և 1942 թ. օգոստոսի 4-ին մայրաքաղաքից մեկնեց ռազմաճակատ՝ 45-րդ բանակի կազմում և Գրոզնու մատույցներում գրավեց դիրքեր:

Սեպտեմբերի կեսերին հայկական զորամիավորումը սկսեց մարտերը զինակի Անդրկովկասի նավթային աղբյուրները նետվող թշնամու դեմ: Այդ կարևոր իրադարձության առթիվ Հայաստանի կառավարությունը հատուկ նամակով դիմեց 89-րդ դիվիզիայի մարտիկներին՝ «Հպարտությամբ իմացանք, որ ձեր միավորումը մտել է գործող բանակի կազմի մեջ և որ հրամանատարությունը վստահել է ձեզ պաշտպանության կարևոր հատվածներից մեկը գերմանա-ֆաշիստական զորքերի դիմադրության վրա»¹⁴:

Մանր մարտերի օրերին այս նամակը ընթերցվեց դիվիզիայի ստորաբաժանումներում ու նոր լիցք հաղորդեց մարտիկներին: Հայ ժողովրդի մարտնչող գավակները պատասխան նամակ ուղարկեցին Հայաստանի աշխատավորներին. «... Մենք անխախտ պահում ենք մեր երդումը: Մենք հպարտորեն կպահենք հայ ժողովրդի ստեղծագործական և լուսավոր էջերը: Չենք մրոտի դյուցազն Հայկի, Վսրդան Մամիկոնյանի, Սասունցի Դավթի, Դավիթ Բեկի և մեր բոլոր հերոս նախնիների պայծառ սնունդները: Հայրենական մեծ ոլատերազմը ընդ ցավեց, որ մենք մեր փառավոր նախնիների արժանավոր հետևորդներն ենք»¹⁵:

Զինվորական թերթերի բովանդակության մեջ զգալի փոփոխություն տեղի ունեցավ, երբ 1942 թ. օգոստոսին մամուլում հրապարակվեց սովետական բանակի Գլխավոր քաղաքական վարչության ընդարձակ կոչ-դիմումը: 47 կետից բաղկացած այդ փաստաթուղթը մարտիկներին հասավ այն ժամանակ, երբ թշնամու առաջխաղացումը դեռ չէր կասեցված: Այդ դիմումը մարտական

¹³ «Առաջ, հանուն հայրենիքի», 26. I. 1943:

¹⁴ «Կարմիր դինվոր», 16. IX. 1942:

¹⁵ «Կարմիր դինվոր», 18. IX. 1942:

խնդիր էր դնում դինվորների, քաղաշխատողների ու հրամանատարների առջև՝ վերակառուցել մարտական աշխատանքը, անցնել ակտիվ պաշտպանության,

«Ոչ մի թիղ նահանջ, մարտիկ, իմացիր.
Քաջը թշնամուն կանի ցաք ու ցիր,
Ինչու՞նու՞մ է նա՝ մեր նենգ թշնամին,
Մարտական դիրքիդ եղիր այս ժամին»¹⁶,

Ձինվորական թերթերն իրենց համարներում պրոպագանդիստական լայն կամպանիա ծավալեցին բանակի Գլխավոր քաղաքական վարչության խոսքը մարտիկներին հասցնելու, քաղաքական ու մարտական աշխատանքը նոր խընդիրների մակարդակին բարձրացնելու համար:

Ազդային լեզուներով լույս տեսնող թերթերը կատարելով այս ցուցումները, հսկայական ուշադրություն էին դարձնում սովետական ժողովուրդների մարտական բարեկամությանը, նրանց հերոսական պայքարին: Դրա ամենավառ ասպարեցություններից մեկն է Կովկասի հերոսական պաշտպանությունը: Թերթերում երևացին նոր խորագրեր՝ նվիրված ՍՍՀՄ եղբայրական ժողովուրդների բարեկամությանը: «Բարեկամություն՝ կոփված ճակատամարտի բովում» խորագրի տակ նյութերը պատմում էին հայ մարտիկների սխրագործությունների մասին, որոնք իրենց ռուս, ուկրաինացի, ադրբեջանցի, ուզբեկ, վրացի եղբայրների հետ մեկտեղ բոլոր ուժերը նվիրաբերում էին թշնամու ջախջախմանը:

Կովկասի համար մղված հերոսամարտերի ժամանակաշրջանում անգնահատելի աշխատանք էր ծավալում Անդրկովկասի ռազմաճակատի «Մարտիկ» թերթը, որ տպագրվել են բաղմամբիվ վավերագրեր, հոդվածներ, ակնարկներ. նամակներ, գրական ստեղծագործություններ և այլ նյութեր, որոնք Հայրենական մեծ պատերազմի յուրօրինակ տարեգրություն են, հայ ժողովրդի այդ շրջանի պատմության բացառիկ կարևոր աղբյուրներ: «Մարտիկը» պատվով կատարեց պրոպագանդիստի և կազմակերպչի իր դերը թե՛ պաշտպանողական և թե՛ հարձակողական մարտերի ժամանակ: Թերթի առաջին համարը լույս տեսավ 1942 թ. հոկտեմբերի 27-ին և տարածվեց Անդրկովկասը պաշտպանող հայ ռազմիկների շրջանում: Առաջին համարից թերթը ռազմիկներին կոչ էր անում. «Կովկասի քաջարի որդիներ, պաշտպանեցե՛ք հայրենի հողի յուրաքանչյուր թիղը, ջախջախեցե՛ք թշնամուն: Կեցցեն Կովկասի ազատասեր ժողովուրդները»:

«Մարտիկն» իր խոսքը ծանրակշիռ և ազդու դարձնելու համար տպագրում էր հայ ականավոր գիտնականների և գրողների, այդ թվում՝ Ավ. Իսահակյանի, Դերենիկ Դեմիրճյանի, Նաիրի Զարյանի, Ստեփան Զորյանի, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու, նկարիչ Մարտիրոս Սարյանի, ժողովրդական ուսուցիչ Սիմակ Սահակյանի հոդվածներն ու ելույթները: Այդ նյութերը հայ ռազմիկներին պատմում էին մեր ժողովրդի անցյալի ու ներկայի մասին, ոգևորում նրանց արիության ու սխրանքի:

Թերթում ելույթ են ունեցել նաև Անդրկովկասը պաշտպանող ազգային զորամիավորումների հրամանատարներն ու մարտիկները: «Հայաստանի զավակները հայրենիքի համար մղվող մարտերում» ուշագրավ հոդվածով հանդես է եկել Անդրկովկասյան ռազմաճակատի քաղվարչության պետ, գեներալ-մայոր Կ. Սորոկինը: Բարձր գնահատելով հայ ժողովրդի զավակների սխրա-

¹⁶ «Հանուն հայրենիքի», 11. VIII. 1942:

գործությունը ռազմի դաշտում, նա գրում է. «Սովետական երկրի եղբայրական ժողովուրդների զավակների հետ միասին հայ խիզախ և քաջարի ռազմիկները հերոսաբար պայքարում են հիտլերյան զավթիչների դեմ: Սրբությամբ կատարելով հարազատ ժողովրդի պատգամը, նրանք ցույց են տալիս իրենց անսահման սերն ու նվիրվածությունը սովետական հայրենիքին: Մարտի դաշտում նրանք անմահ սխրագործություններով հարստացնում են իրենց ժողովրդի մարտական մեծ ավանդույթները և նոր փառքով օծում սովետական զենքերը: Խերթի նույն համարում տպագրված են նաև զենքբալ-մայոր Գ. Տեր-Գասպարյանի, Սովետական Միության հերոսներ Խ. Մելիքյանի, Ս. Մադոյանի, շարքային Զ. Կարախանյանի, փոխգնդապետ Գ. Միքայելյանի և Հ. Բաղդամյանի գիմանկարները:

«Մարտիկն» իր բազմաբովանդակ գործունեության ընթացքում հսկայական տեղ է հատկացրել հայ մարտիկներին ռուսաց լեզու ուսուցանելու հարցերին: Այս իմաստով, թերթն անշեղորեն կենսագործում էր բանակի Գլխավոր քաղաքական վարչության ցուցումը՝ «Ռուսաց լեզվի տիրապետումը ոչ-ռուսագոյի մարտիկների ու սպաների կողմից, անգնահատելի նշանակություն ունի զորամասերի ու ստորաբաժանումների, նաև մարտական հաջող ուսուցման համար: Ռուսաց լեզուն իմացող մարտիկը զգալիորեն ավելի հեշտությամբ է յուրացնում սովետական բանակի կանոնադրքերն ու հրահանգները, զենքի նյութական մասը: Յուրաքանչյուր ռազմիկ պետք է պատրաստված լինի մարտական իրադրության բոլոր դժվարությունների ու անակնկալների համար, պետք է վարժված լինի արագ, համարձակ, գործիմաց վճիռ կայացնելու և ստացած հրամանը կատարելու տեսակետից: Այդ բանին հասնելը զգալիորեն դժվար է, եթե մարտիկը, իսկ առավել ևս սպան, չգիտե ռուսաց լեզուն»¹⁷:

«Մարտիկի» էջերում նոր խորագիր երևաց. «Սովորիր ռուսաց լեզուն»: Համարյա բոլոր համարներում թերթի տպագրել է ռազմական գործին, մարտական գործողություններին, կանոնադրքերին, հրամաններին վերաբերող բառարան: Բառերն ու տերմինները տպագրվում էին ռուսերեն, տրվում էին դրանց հայերեն թարգմանությունները: Ռուսաց լեզվի ուսուցման այս ձևը մեծապես օգնում էր հայ մարտիկներին կարճ ժամկետում սովորելու անհրաժեշտ այն բառերն ու արտահայտությունները, որոնք կիրառվում էին ամենօրյա գործողությունների ընթացքում:

«Մարտիկն» աչքի էր ընկնում նաև ռազմական գիտելիքների պրոպագանդան գործում: Թերթի էջերում բազմաթիվ են այն նյութերը, որոնք հայ մարտիկներին ուսուցանում էին ռազմական արվեստը: Հետաքրքիր են «Սնայակրի դասընթացը», «Փորձված զինվորի խոսքը», «Հետախույզի դպրոցը», «Վարդիականի տրիբունը», «Գրոհիչ խմբի բնույթը», «Խմբի կապը և կառուցվածքը», «Ժամանակը և հանկարծակիությունը մարտի հիմքն են» խորագրերն ու հոդվածները:

Թերթի գործունեության է՛լ ավելի պատասխանատու շրջանը սկսվեց 1942 թ. վերջերին, երբ Անդրկովկասյան ռազմաճակատի դուրերն անցան հարձակման: Նյնիվ ժամանակի պահանջներից, թերթի արմատաուլս փոխեց իր աշխատանքի ոճը և մարտիկներին առաջադրեց՝ «Հայրենիքի դավալակներ, առաջ» կոչը: Այդպես է սկսվում 1942 թ. դեկտեմբերի 31-ին լույս տեսած

¹⁷ «Մարտիկ», 1943, № 88:

¹⁸ «Մարտիկ», 22. IX. 1943:

Մեր թի առաջին էջը: «Առաջ, հանուն մեր հաղթանակի» առաջնորդող հոգվա-
յում «Մարտիկը» գրում էր. «Սովետական Կովկասի պաշտպաններ, վերջանում
է 1942 թվականը, և մենք մտնում ենք 1943 թվականի նոր տարին: Ակտի-
ւորապես պաշտպանական մարտերում, Կովկասի նախալեռներում հյուսիսում թշնա-
մուն, մեր ռազմաճակատի զորքերը հարձակման անցան և նալչիկի ուղղու-
թյամբ մի քանի օրում առաջ շարժվեցին 24—30 կիլոմետր, հիտլերականների
լեռնային զորավարները հազարավոր սովետական քաղաքացիների: Հայաստանի
դավաճաններ, մայր երկիրը, ժողովուրդը հետևում է ձեր գործողություններին:
Եղև սովետական Կովկասի պաշտպանների առաջավոր շարքերում: Նոր հաղ-
թանակներով նշանավորենք նոր տարին»:

Այդ ժամանակամիջոցում թերթն էլ ավելի ամրապնդեց իր կապերը թի-
կունքի հետ, ավելի շատ նյութեր սկսեց տպագրել հանրապետության աշխա-
տավորների ձեռք բերած հաջողությունների մասին: Թիկունքից ստացված տե-
ղեկությունները ոգևորում էին ռազմիկներին, բարձրացնում նրանց տրամա-
դրությունը, մարտական ոգին:

«Մարտիկը» լուսաբանել էր թշնամու թիկունքում հայ պարտիզանների
գործունեությունը: Մեր ժողովրդի զավակները մինչև վերջ հավատարիմ մնա-
լով կոմունիստական կուսակցության վեհ գաղափարներին, իրենց զենքը վայր
չդրին անդամ թշնամու թիկունքում: Հայ պարտիզանները վրեժ էին լուծում
թշնամուց Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Կուբանում, Ուկրաինայում: Այդ
մասին նյութեր տպագրվում էին «Հայ պարտիզանները հայրենիքի համար
մղված մարտերում» խորագրի տակ:

Հիտլերյան հորդանների վերջին հենակետը Կովկասում՝ Կուբանը և Թա-
մանյան թերակղզին ազատագրելու ժամանակամիջոցում մեծ էր 89-րդ հայ-
կական հրաձգային դիվիզիայի մարտիկների սիրելի թերթի՝ «Կարմիր զին-
վորի» դերը: Հարձակողական մարտերի հենց առաջին օրերից այն պրոպա-
գանդել է, հայ ժողովրդի քաջարի զավակների մեջ դաստիարակել աշատա-
տենչ գաղափարներ, ուսուցանել ռազմական գործի վարպետություն, ճարպ-
կություն և գործիմացություն: Ծանր մարտերի ժամանակ թերթը ռազմիկի հետ
էր՝ խորհուրդ էր տալիս նրան, օգնում էր դուրս գալու ծանր իրավիճակից: Կու-
բանն ու Թամանյան թերակղզին ազատագրելու օրերին «Կարմիր զինվորը»
հրապարակել է Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի ռազմական խորհրդի
դիմումը՝ ուղղված 89-րդ հայկական հրաձգային դիվիզիայի մարտիկներին և
հրամանատարներին: Այդ դիմումում մասնավորապես ասված է. «Հյուսիսա-
յին Կովկասի ռազմաճակատի հաղթական շարքերում 89-րդ հայկական հրա-
ձգային դիվիզիան գրավեց իր տեղը և բոլոր զորքերի հետ միասին արիաքա-
ր մարտնչում է ատելի թշնամու դեմ: Հիանալի առիթ է ստեղծված ձեռք համար՝
հարվածել և ոչնչացնել թշնամուն և դրանով իսկ ծածկել ձեզ, ձեր հարազատ
հայկական դիվիզիան և դրա հետ միասին ամբողջ հայ ժողովուրդը՝ փառքով
ու մարտական արիության նշանով: Կովկասի համար մղվող կռիվների վերջին
էտապը մոտենում է իր հաղթական վախճանին: Կասկած չկա, որ Գերագույն
գլխավոր հրամանատարությունը կնշի պարզեցումներով և «Թամանյան»
անվանումի շնորհումով այն դիվիզիաներին ու զնդերին, որոնք ցույց կտան
մարտական արիության և փառքի օրինակներ: Ռազմաճակատի ռազմական
խորհուրդը կոչ է անում ձեզ լարել բոլոր ուժերը, լիովին հանդես բերել ձեզ
հատուկ արիությունն ու քաջությունը և կատարել ձեր խնդիրը՝ ոչնչացնել թշ-

Համուն, առաջինը մտնել Թաման քաղաքն ու նավահանգիստը. այդպիսով աշտանավայել կերպով ստանալ 59-րդ հայկական Թամանյան անվանումը։¹⁹

Տպագրելով այս դիմումը, թերթն իր հետագա համադրներում բազմաթիվ նյութեր է նվիրել այդ կարևոր խնդրին։

59-րդ հայկական հրաձգային դիվիզիան սրբությամբ կատարեց իր պատմական միսիան Կովկասում։ Մասնակցելով սովետական հողի ազատադրմանը, այն, հերավի. փառքով պսակեց թե՛ իր և թե՛ հայ ժողովրդի անունը։ Հայաստանի կոմկուսի Կենտկոմին հղած հեռագրում Հյուսիսային Կովկասի ռազմաճակատի հրամանատար, գեներալ-գեդապետ Ի. Պետրովը գրում էր. «Հոկտեմբերի 9-ի առավոտյան ժամը 4-ից 30 ռուպե անց, կոտրվեց թշնամու վերջին դիմադրությունը Թամանի թերակղզում։ Թշնամու ցիր ու ցան զորամասերը, կտրված լինելով ջրային անցուղիներից, սեղմվեցին ծովին և ոչնչացվեցին։ Կովկասի համար անցյալ տարի աշնանը Թերեթի, Տուապսեի մոտ, Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի լեռնանցքներում սկսված ճակատամարտի վերջին էտապը ավարտվեց։ Թշնամու ջախջախված զորամասերը պարտություն կրելով, խայտառակ կերպով փախան Ղրիմ։ Մարտերում աչքի ընկավ գեդապետ Նվեր Սաֆարյանի 59-րդ հայկական դիվիզիան»։²⁰

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանում լույս տեսած հայկական զինվորական թերթերը կարևոր աղբյուրներ են, որոնց նյութերը ցույց են տալիս հայ ժողովրդի մարտական բարեկամությունը Սովետական Միության մյուս ազգերի հետ, հայկական ազգային զորամասերի կազմավորումն ու նրանց մարտական գործողությունները։ Այդ թերթերը հայ ժողովրդի զավակների ռազմական սխրագործությունների տարեգրություններ են, դրանց ուսումնասիրման և պրոպագանդման զործր կարևոր նշանակություն ունի նաև այսօր։

¹⁹ Կարմիր զինվոր, 21. IX. 1943.

²⁰ Կարմիր զինվոր, 17. X. 1943.

ВОЕННАЯ ПЕЧАТЬ КАК ИСТОРИЧЕСКИЙ ИСТОЧНИК

М. С. СТЕПАНЯН

Р е з ю м е

Военные газеты, выходившие на армянском языке в годы Великой Отечественной войны, являются ценными источниками, которые отражают дружбу армянского народа с другими братскими народами нашей родины, рассказывают о формировании армянских национальных дивизий. В этих газетах освещены героизм и мужество сынов армянского народа в борьбе с немецко-фашистскими захватчиками, их преданность коммунистической партии и социалистической Родине.

Изучение и пропаганда печати военных лет имеет важное значение и сегодня.